



Համարը
Տիպը Համաձայնագիր
Սկզբնաղբյուրը ՀՀԱԳՆՊՏ 2017.12.27/2(39)
Ընդունող մարմինը Հայաստանի Հանրապետություն
Ստորագրող մարմինը
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 15.11.2017

Տեսակը Հիմնական
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Դուբայ
Ընդունման ամսաթիվը 16.11.2016
Ստորագրման ամսաթիվը 16.11.2016
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

**ՀԱՄԱՉԱՅՆԱԳԻՐ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՒՐՈՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻԶԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԱՌԱՆՅ ՍՈՒՏՔԻ ԱՐՏՈՆԱԳՐԻ
ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Հ Ա Մ Ա Զ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՒՐՈՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻԶԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԱՌԱՆՅ ՍՈՒՏՔԻ ԱՐՏՈՆԱԳՐԻ
ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Սոլդովայի Հանրապետության կառավարությունը, այսուհետև՝ Կողմեր, ցանկություն հայտնելով նպաստել երկու պետությունների միջև բարեկամական կապերի զարգացմանը, երկու պետությունների քաղաքացիների փոխադարձ այցելությունների ռեժիմի իրավական կանոնակարգման նպատակով, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

1. Կողմերի պետությունների քաղաքացիները, այդ թվում երրորդ պետությունների տարածքներում մշտապես բնակվողները կամ ժամանակավորապես գտնվողները, կարող են առանց մուտքի արտոնագրի՝ արտասահման ուղևորվելու համար վավերական ճամփորդական փաստաթղթերի հիման վրա մուտք գործել, դուրս գալ, տարանցիկ տեղաշարժվել կամ գտնվել մյուս Կողմի պետության տարածքում անընդմեջ կամ մի քանի այցելությամբ՝ 6 ամսվա ընթացքում 90 օրը չգերազանցող ժամկետով՝ սկսած առաջին անգամ երկիր մուտք գործելու ամսաթվից:
2. Մի Կողմի պետության տարածք մուտք գործելու պահին մյուս Կողմի պետության քաղաքացին պետք է ունենա ոչ պակաս, քան 3 ամիս ժամկետով վավերական ճամփորդական փաստաթուղթ՝ հաշված մյուս Կողմի պետության տարածքից դուրս գալու ենթադրվող ամսաթվից:

Հոդված 2

1. Սույն Համաձայնագրին համապատասխան՝ արտասահման ուղևորվելու համար վավերական ճամփորդական փաստաթղթերն են.
 - Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար՝
 - դիվանագիտական անձնագիրը,
 - Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիրը,
 - Հայաստանի Հանրապետություն վերադարձի վկայականը (միայն Հայաստանի Հանրապետություն վերադառնալու համար),
 - Սոլդովայի Հանրապետության քաղաքացիների համար՝
 - դիվանագիտական անձնագիրը,

- ծառայողական անձնագիրը,
 - Մոլդովայի Հանրապետության քաղաքացու անձնագիրը,
 - Ճամփորդական փաստաթուղթը (միայն Մոլդովայի Հանրապետություն վերադառնալու համար):
2. Կողմերը դիվանագիտական ուղիներով տեղեկատվություն են փոխանակում գործող ճամփորդական փաստաթղթերը փոփոխելու մասին: Կողմերը կփոխանակեն այդ փաստաթղթերի նմուշները ոչ ուշ, քան նշված փաստաթղթերը գործողության մեջ դնելուց 30 օր առաջ:

3. Արտասահման ուղևորվելու համար նախատեսված վավերական ճամփորդական փաստաթղթերի ցանկում փոփոխություններ և լրացումներ կատարվում են Կողմերի փոխադարձ համաձայնությամբ և ձևակերպվում սույն Համաձայնագրի 8-րդ հոդվածով նախատեսված առանձին արձանագրություններով:

Հոդված 3

Կողմերից մեկի պետության քաղաքացիները կարող են մուտք գործել, դուրս գալ, տարանցիկ տեղաշարժվել մյուս Կողմի պետության տարածքով՝ միջազգային ուղևորափոխադրումների համար նախատեսված սահմանային անցակետերով:

Հոդված 4

Մի Կողմի պետության քաղաքացիները մյուս Կողմի պետության տարածքում իրենց գտվելու ընթացքում պետք է պահպանեն այդ Կողմի պետության օրենսդրությունը:

Հոդված 5

Սույն Համաձայնագիրը չի սահմանափակում Կողմերից յուրաքանչյուրի իրավունքը՝ մերժելու մյուս Կողմի պետության այն քաղաքացիների մուտքը կամ ձեռնարկելու նրանց վերադարձնելու միջոցներ, որոնց ներկայությունը իր պետության տարածքում համարվում է անցանկալի:

Հոդված 6

1. Մի Կողմի պետության քաղաքացիները մյուս Կողմի պետության տարածքում սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածում նշված փաստաթղթերը կորցնելու դեպքում պարտավոր են այդ մասին տեղեկացնել գտնվելու վայրի պետության իրավասու մարմիններին, որոնք տրամադրում են փաստաթղթերի կորստի մասին հայտարարությունը հաստատող տեղեկանք:
2. Կողմերի դիվանագիտական ներկայացուցչությունները և հյուպատոսական հիմնարկներն իրենց քաղաքացիներին կտրամադրեն սույն Հոդվածի 1-ին կետում նշված իրենց պետություն վերադառնալու համար ճամփորդական փաստաթուղթը՝ Կողմերի պետությունների օրենսդրություններին համապատասխան:

Հոդված 7

Կողմերը դիվանագիտական ուղիներով միմյանց ծանուցում են իրենց պետության տարածք մուտք գործելու, ելքի, գտնվելու պայմանների փոփոխության մասին, բայց ոչ ուշ, քան այդ փոփոխություններն ուժի մեջ մտնելուց 30 օր առաջ:

Հոդված 8

Կողմերը փոխադարձ համաձայնությամբ կարող են սույն Համաձայնագրում կատարել փոփոխություններ և լրացումներ, որոնք ձևակերպվում են առանձին արձանագրություններով և հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

Հոդված 9

Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանմանն ու կիրառմանը վերաբերող վիճելի հարցերը կկարգավորվեն Կողմերի միջև խորհրդատվությունների և բանակցությունների միջոցով:

Հոդված 10

1. Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի ամբողջովին կամ մասամբ կասեցնել սույն Համաձայնագրի գործողությունը, եթե դա անհրաժեշտ է պետության անվտանգության ապահովման, հասարակական կարգի կամ իր պետության բնակչության առողջության պաշտպանության համար:

2. Կողմերը պետք է անհապաղ տեղեկացնեն միմյանց սույն Հոդվածի 1-ին կետով նախատեսված միջոցառումների ձեռնարկման և դրանց վերացման մասին՝ նման որոշում ընդունելուց 15 օր առաջ:

Հոդված 11

1. Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով և ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու մասին վերջին գրավոր ծանուցումը ստանալու օրվանից 30 (երեսուն) օր լրանալուց հետո:

2. Կողմերից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը՝ այդ մասին մյուս Կողմին դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցելով: Այդ դեպքում Համաձայնագրի գործողությունը դադարում է նման ծանուցում ստանալու օրվանից 90 (իննսուն) օր անց:

Կատարված է Երևան քաղաքում 2016 թվականի նոյեմբերի 16-ին երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն, ընդ որում, բոլոր տեքստերն էլ հավասարազոր են: Սույն Համաձայնագրի դրույթները մեկնաբանելիս տարաձայնություններ առաջանալու դեպքում հիմք է ընդունվում ռուսերեն տեքստը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2017թ. նոյեմբերի 15-ին